

**5-րդ դասարան  
Մայրենի**

*Արքայական խոսքը մեր կմնա հավետ:*

*Վահան Տերյան*

**1. Տրված բառաշարքում ընդգծի՛ր բաղաձայն հնչյունով սկսվող բառերը (2 միավոր, -0,5):**

Անտառ, էական, եղբւանի, իջնանատուն, երախտիք, ըմբռնել, ուռկան, ոհմակ, օշարակ, որոզայթ:

**2. Արտահայտի՛ր մեկ բառով (3 միավոր, -0,5):**

Թռչունի էգը-----

Դանակ է, որը միայն բժիշկն է օգտագործում-----

Քանդակագարդ և շքեղ գավազան-----

Ձկների խումբը-----

Սյուների գլխին դրվող և արու ոչխարի հետ կապ ունեցող քար-----

Կամարաձև առաստաղ, որ մեր բերանի խոռոչում է-----

**3. Ամեն շարքում գտի՛ր և ընդգծի՛ր ավելորդ բառը (3 միավոր, -0,5):**

ա) սուտակ, ադամանդ, շուշան, մարգարիտ

բ) երամակ, պարս, նոխազ, բույլ

գ) հոտաղ, հովիվ, նախրապան, ատաղձագործ

դ) գինարբուկ, գինարբուք, երիցուկ, կուժկոտրուկ

ե) մաքի, գամբիկ, հովատակ, ալոջ

զ) կաղնի, բարդի, դաղձ, սոսի

**4. Ապացուցի՛ր, որ նախորդ վարժության ընդգծածը բառերն ավելորդ են (3 միավոր, -0,5):**

Այս բառն ավելորդ է տրված բառաշարքում, քանի որ՝

ա) երեք բառերը նշանակում են-----, իսկ սա՝-----

բ) երեք բառերը նշանակում են-----, իսկ սա՝-----

գ) երեք բառերը նշանակում են-----, իսկ սա՝-----

դ) երեք բառերը նշանակում են-----, իսկ սա՝-----

ե) երեք բառերը նշանակում են-----, իսկ սա՝-----

զ) երեք բառերը նշանակում են-----, իսկ սա՝-----



